

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- ✓ 2012թ. հուլիսի 4-6-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի վարչության պետ Վ. Գևորգյանը, նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ. Հովհաննիսյանը, պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ Գ. Նշանյանը և վարչատնտեսական աշխատանքների բաժնի պետ Լ. Գևորգյանը մասնակցել են ք. Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) կայացած «Մարդահամարի անցկացում, տվյալների մշակում և տարածում» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012 թ. հուլիսի 4-6-ը ՀՀ ՎՊԽ անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք. Ժնևում (Շվեյցարիա) կայացած Բնապահպանական ցուցանիշների սահմանման, հաշվառման և զեկույցներում դրանց օգտագործմանն առնչվող միացյալ խորհրդակցությանը,
- ✓ 2012 թ. հուլիսի 22-ից - օգոստոսի 2-ը ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Տնային տնտեսությունների կենսամակարդակի բազմանպատակային հետազոտության անցկացում» խորագրով ուսուցողական սեմինարին,
- ✓ 2012 թ. օգոստոսի 6-ից - 24-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը մասնակցել ք. Վիեննայում (Ավստրիա) կայացած «Դրամավարկային և ֆինանսների վիճակագրություն» խորագրով ուսուցողական դասընթացին,
- ✓ 2012թ. օգոստոսի 20-ից - 24-ը ՀՀ ՎՊԽ անդամներ Գ. Անանյանը և Լ. Պետրոսյանը, ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա. Ավագյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Լ. Գրիգորյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի բիզնես ռեգիստրի բաժնի պետ Լ. Հարությունյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած Եվրոպական հարևանության և գործընկերության գործիքի ներքո ԹՎԻՆԻՆԳ ծրագրի «Աջակցություն Հայաստանի ազգային վիճակագրական ծառայությանը» պայմանագրի «Գյուղատնտեսական համատարած

հաշվառում» և «Որակի կառավարում» բաղադրիչների շրջանակում ուսումնական այցելություններին,

- ✓ 2012թ. օգոստոսի 20-ից - 24-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տրանսպորտի և կապի վիճակագրության բաժնի պետ Գ. Թորոսյանը, նույն բաժնի գլխավոր մասնագետ Ա. Ներսիսյանը և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ Հ. Եղիազարյանը մասնակցել են ք. Կոպենհագենում (Դանիա) կայացած «Տրանսպորտի վիճակագրություն» խորագրով ուսումնական այցելությանը,
- ✓ 2012թ. օգոստոսի 27-ից - 29-ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ա. Առուշանյանը մասնակցել է ք. Բանգկոկում (Թաիլանդ) կայացած «Աղքատության կրճատման համար քաղաքական ռեֆորմների և ազդեցությունների գնահատում» խորագրով դասընթացին: